



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

14 ապրիլի 2025 թվականի

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան՝ հետեւյալ կազմով՝

Նախագահող՝ դատարանի նախագահ Ա.Ա. Դրոնովի,

զեկուցող դատավոր՝ Ա.Բ. Կիշկեմբաեւի,

դատավորներ՝ Ա.Ս. Աժիբրաիմովայի, Է.Վ. Յայրիյանի, Դ.Պ. Ալեքսանդրովի, Ա.Ա. Չաբարայի, Ե.Ժ. Իսմաիլովի, Մ.Տ. Կայիպովի, Ն.Վ. Պավլովայի, Ա.Գ. Թուկյանի,

քարտուղարությամբ՝ դատական նիստերի քարտուղար Ա.Բ. Ալախբայի,

հետազոտելով գործի նյութերը, լսելով զեկուցող դատավորին, առաջնորդվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 46-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-75-րդ, 96-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 14-րդ, 72-րդ, 85-րդ հոդվածներով,

ներկայացնում է խորհրդատվական եզրակացությունն ըստ Լիլիա Վասիլիի Շչուր-Տրուխանովիչի դիմումի՝ աշխատանքային իրավահարաբերություններին վերաբերող՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթների պարզաբանման մասին:

I. Դիմողի հարցերը

1. Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Լ.Վ. Շչուր-Տրուխանովիչը (այսուհետ՝ Դիմող), որը զբաղեցնում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ ԵՏՀ, Հանձնաժողով) իրավական դեպարտամենտի տնօրենի պաշտոնը, Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի (Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի թիվ 2 հավելված, այսուհետ՝ Ստատուտ) 46-րդ կետի հիման վրա դիմել է Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ Հանձնաժողովի պաշտոնատար անձանց աշխատանքային հարաբերություններին վերաբերող՝ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) դրույթների պարզաբանումն ստանալու նպատակով:

Ըստ Դիմողի՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն, ԵԱՏՄ) իրավունքի նորմերը հնարավորություն չեն ընձեռում միանշանակորեն սահմանել՝ արդյո՞ք որպես ԵՏՀ պաշտոնատար անձ՝ աշխատանքային գործունեության իրականացումը համատեղելի է Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական դատարանի դատավորների ռեեստրում (այսուհետ համապատասխանաբար՝ ԱՊՀ դատարան, Դատավորների ռեեստր) միաժամանակ ընդգրկված լինելու եւ այդ դատարանի դատավորի կարգավիճակով գործունեություն իրականացնելու հետ:

Որպես Միության մշտապես գործող մարմնի պաշտոնատար անձ՝ Դիմողը, Ստատուտի 46-րդ կետի կարգով, խնդրում է պարզաբանել.

1. Արդյո՞ք կարող է ԵՏՀ պաշտոնատար անձը, հաշվի առնելով Պայմանագրով նախատեսված պահանջներն ու սահմանափակումները, գործունեություն իրականացնել որպես ԱՊՀ դատարանի դատավոր կամ *ad hoc* այլ միջազգային դատարանի դատավոր:

2. Արդյո՞ք Հանձնաժողովի պաշտոնատար անձանց համար ԱՊՀ դատարանի դատավորի կամ *ad hoc* այլ միջազգային դատարանի դատավորի կարգավիճակով գործունեությունը համարվում է «աշխատանք» կամ «այլ վարձատրվող գործունեություն»՝ Հանձնաժողովի մասին հիմնադրույթի 35-րդ եւ 56-րդ կետերի իմաստով, եւ արդյո՞ք նման գործունեությունը ենթադրում է Պայմանագրով նախատեսված որեւէ սահմանափակման կիրառում:

3. Արդյո՞ք նշված գործունեությունը դասվում է Հանձնաժողովի մասին հիմնադրույթի 35-րդ եւ 56-րդ կետերում նշված գործունեության տեսակների շարքին, մասնավորապես՝ մանկավարժական, գիտական կամ այլ ստեղծագործական գործունեությանը:

2. Գործը Դատարանի կողմից քննությանը նախապատրաստվելու շրջանակներում, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 75-րդ հոդվածի կարգով հարցումներ են ուղարկվել բարձրագույն դատական մարմիններ, սահմանադրական վերահսկողության մարմիններ, ԵՏՀ, ԱՊՀ դատարան, որոնց ի պատասխան՝ ստացվել են պատասխաններ եւ նյութեր:

II. Դատարանի եզրահանգումները

3. Առաջնորդվելով Ստատուտի 50-րդ կետով՝ Դատարանի մեծ կոլեգիան, արդարադատություն իրականացնելիս, այդ թվում՝ Պայմանագրի դրույթները պարզաբանելիս, կիրառում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներն ու նորմերը, Պայմանագիրը, Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերը, Միության մարմինների որոշումներն ու կարգադրությունները, միջազգային սովորույթը՝ որպես համընդհանուր գործելակերպի ապացույց, որը ճանաչված է որպես իրավական նորմ:

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածին համապատասխան՝ միջազգային պայմանագիրը պետք է մեկնաբանվի բարեխղճորեն՝ պայմանագրի եզրույթների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաեւ հաշվի առնելով պայմանագրի օբյեկտը եւ նպատակները:

4. Հիմնվելով Պայմանագրի 8-րդ հոդվածի 2-րդ կետի եւ 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Ստատուտի «Դատարանի իրավասությունը» IV գլխի, Կանոնակարգի «Պարզաբանման վերաբերյալ գործերով վարույթը» VIII գլխի դրույթների համակարգային մեկնաբանության վրա՝ Դատարանի մեծ կոլեգիան արձանագրում է Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի եւ Միության մարմինների՝ աշխատանքային իրավահարաբերություններին

վերաբերող դրույթները պարզաբանելու իր լիազորությունների առկայությունը: Նաեւ Դատարանի մեծ կոլեգիան առաջնորդվում է նրանով, որ համապատասխան միջազգային պայմանագրերի եւ Միության իրավունքը կազմող ակտերի դրույթների՝ Դատարանի կողմից պարզաբանումն այն կոնկրետ նորմերի բովանդակության եւ իմաստի բացահայտումն է, որոնք պարզաբանման կարիք ունեն:

Սույն խորհրդատվական եզրակացության առարկան է Պայմանագրի դրույթների, նախեւառաջ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին հիմնադրույթի (Պայմանագրի թիվ 1 հավելված, այսուհետ՝ ԵՏՀ-ի մասին հիմնադրույթ) 35-րդ եւ 56-րդ կետերի պարզաբանումը, որոնք սահմանում են Հանձնաժողովի պաշտոնատար անձանց նկատմամբ պահանջներ, սահմանափակումներ եւ արգելքներ, այն բանի սահմանման համատեքստում, թե ինչ չափով են այդ պահանջները, սահմանափակումները եւ արգելքները խոչընդոտում Հանձնաժողովի պաշտոնատար անձի՝ Դատավորների ռեեստրում նշանակումը (ընտրությունը) եւ նրա կողմից՝ որպես ԱՊՀ դատարանի դատավոր, *ad hoc* այլ միջազգային դատարանի դատավորի գործունեության իրականացումը:

5. Ընդ որում, Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ ԱՊՀ դատարանի գործունեությունը կարգավորող միջազգային իրավունքի նորմերը սույն գործով Միության դատարանի համար կիրառելի իրավունք չեն՝ Ստատուտի 50-րդ կետի իմաստով, եւ հաշվի են առնվում որպես գործին առնչվող փաստական հանգամանքներ: Այդ միջազգային իրավական նորմերի պարզաբանումը դուրս է Միության Դատարանի իրավասությունից:

6. Պայմանագրի 2-րդ հոդվածի չորրորդ պարբերության համաձայն՝ անդամ պետությունների այն քաղաքացիները, որոնք նշանակված են Հանձնաժողովի դեպարտամենտների տնօրենների պաշտոններում, պաշտոնատար անձինք են: Եվրասիական տնտեսական միությունում սոցիալական երաշխիքների, արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին հիմնադրույթի (այսուհետ՝ Արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին հիմնադրույթ), որը կազմում է Պայմանագրի թիվ 32 հավելվածը, 2-րդ կետին եւ ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 56-րդ կետին համապատասխան՝ պաշտոնատար անձինք Միության միջազգային ծառայողներ են: Պայմանագիրը նախատեսում է մի շարք պահանջներ

ԵԼ Միության միջազգային ծառայողների նկատմամբ սահմանում է մի շարք արգելքներ ու սահմանափակումներ:

Այսպես, վերոնշյալ նորմերին համապատասխան՝ պաշտոնատար անձինք իրենց լիազորությունները (ծառայողական պարտականությունները) կատարելիս չպետք է պահանջեն կամ ստանան ցուցումներ անդամ պետությունների պետական իշխանության մարմիններից կամ պաշտոնատար անձանցից, ինչպես նաեւ Միության անդամ չհանդիսացող պետությունների իշխանություններից: Նրանք նաեւ պետք է ձեռնպահ մնան որեւէ գործողությունից, որը չի համապատասխանում միջազգային ծառայողի՝ իրենց կարգավիճակին:

Պայմանավորված այդ արգելքներով՝ պաշտոնատար անձը, ի թիվս այլնի, չպետք է ստանա եւ պահանջի ցուցումներ, որոնք կարող են ազդել իր ծառայողական պարտականությունների անկախ եւ արդյունավետ կատարման վրա, ինչպես անդամ պետությունների պետական իշխանության մարմիններից եւ նրանց պաշտոնատար անձանցից, այնպես էլ ցանկացած այլ անձից:

ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 3-րդ կետին համապատասխան՝ յուրաքանչյուր անդամ պետություն իր հերթին պարտավորվում է անշեղորեն հարգել պաշտոնատար անձանց լիազորությունների միջազգային բնույթը եւ նրանց վրա իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս ազդեցություն չգործադրել:

Դատարանի մեծ կոլեգիան, հաշվի առնելով վերոշարադրյալը, նշում է, որ Պայմանագրում Միության միջազգային ծառայողների նկատմամբ ամրագրվել է միջազգային պրակտիկայում ընդհանուր ճանաչում գտած միջազգային քաղաքացիական ծառայության անկախության սկզբունքը, որը, այդ թվում՝ նախատեսում է միջազգային ծառայողների կողմից իրենց պաշտոնական պարտականությունների անկախ եւ արդյունավետ կատարման համար պայմանների ստեղծման անհրաժեշտությունը:

Պաշտոնատար անձանց կողմից այս սկզբունքից բխող իրենց պարտականությունների բարեխիղճ կատարումը, դրա հարգումն ու պահպանումը Միության բոլոր անդամ պետությունների եւ մարմինների կողմից՝ Միության միջազգային ծառայության ինստիտուտի գործունեության՝ որպես տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն՝

իրենց գործառույթների արդյունավետ կատարման անհրաժեշտ պայմանն է:

7. Այն նորմը, որը պարտավորեցնում է Հանձնաժողովի պաշտոնատար անձին ձեռնպահ մնալ իր միջազգային ծառայողի կարգավիճակի հետ անհամատեղելի գործողություններից, կրում է ընդհանուր բնույթ եւ ենթադրում է, որ պաշտոնատար անձը պարտավոր է հատուկ զգուշավորություն ցուցաբերել՝ ինչպես իր լիազորությունները կատարելիս, այնպես էլ արտածառայողական հարաբերություններում, այդ թվում՝ պետք է խուսափի շահերի բախումից եւ Միության հեղինակությանը վնաս հասցնող ոչ բարոյական վարքագծից:

Հանձնաժողովի յուրաքանչյուր պաշտոնատար անձի՝ շահերի բախումը, որն առաջացել է կամ կարող է առաջանալ իր անձնական շահագրգռվածության առկայության պատճառով, կարգավորելու կամ կանխարգելելու միջոցներ ձեռնարկելու պարտականությունն ուղղակիորեն նախատեսված է ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 61-րդ կետով եւ ենթակա է միջազգային ծառայողի կողմից բարեխիղճ պահպանման՝ իր լիազորությունների գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

8. Արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին հիմնադրույթի 2-րդ կետով սահմանված ընդհանուր պահանջը կոնկրետացվում է այդ Հիմնադրույթի 23-րդ կետում, ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 35-38-րդ, 56-րդ կետերում:

Արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին հիմնադրույթի 23-րդ կետի համաձայն՝ պաշտոնատար անձինք իրավունք չունեն զբաղվելու ձեռնարկատիրական եւ սեփական կամ այլ անձանց շահ հետապնդող որեւէ այլ գործունեությամբ՝ բացառությամբ գիտական, ստեղծագործական եւ մանկավարժական գործունեության:

ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 38-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի պաշտոնատար անձանց նկատմամբ տարածվում են դրա 35-37-րդ կետերով սահմանված սահմանափակումները:

ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 35-րդ, 38-րդ կետերի համաձայն՝ պաշտոնատար անձինք իրենց լիազորությունների գործողության ամբողջ ժամկետի ընթացքում իրավունք չունեն Հանձնաժողովում աշխատանքը համատեղելու այլ աշխատանքի

հետ կամ զբաղվելու մեկ այլ վարձատրվող գործունեությամբ՝ բացի մանկավարժական, գիտական կամ այլ ստեղծագործական գործունեությունից: Նույնաբովանդակ նորմ սահմանված է ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 56-րդ կետի չորրորդ պարբերությունում:

9. Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Դատարանի մեծ կոլեգիան հանգում է այն եզրակացության, որ Արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին հիմնադրույթի 23-րդ կետը, ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 35-38-րդ եւ 56-րդ կետերը՝ դրանց փոխկապակցության մեջ, արգելք են սահմանում հետեւյալի նկատմամբ՝

ա) այլ աշխատանքի հետ պաշտոնատար անձի կողմից Հանձնաժողովում աշխատանքի համատեղում.

բ) պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական, այլ վարձատրվող գործունեության, սեփական կամ այլ անձանց շահ հետապնդող գործունեություն.

գ) պաշտոնատար անձի կողմից ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 36-րդ կետի 1-8-րդ ենթակետերում եւ 37-րդ կետում թվարկված գործունեության իրականացում եւ գործողությունների (անգործության) կատարում:

Ինչ վերաբերում է պաշտոնատար անձի՝ Պայմանագրով չարգելված գործունեության տեսակներին, ապա դրանք ինքնին օբյեկտիվորեն անհամատեղելի չեն միջազգային ծառայողի կարգավիճակի հետ:

Հնարավոր շահերի բախման առաջացումը (առկայությունը) ենթակա է պարզման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ կիրառելի իրավական նորմերին համապատասխան: Ելնելով Արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին հիմնադրույթի 2-րդ կետից՝ ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 61-րդ կետի հետ դրա փոխկապակցության մեջ, Հանձնաժողովի պաշտոնատար անձը պարտավոր է միջոցներ ձեռնարկել՝ շահերի բախումը կարգավորելու կամ կանխելու համար:

10. Վերոնշյալ Պայմանագրի դրույթների վերլուծությունը նաեւ թույլ է տալիս եզրակացնել, որ Պայմանագիրը լիակատար արգելք չի սահմանում պաշտոնատար անձի կողմից՝ միջազգային ծառայողի պարտականությունների կատարումից զատ, մասնագիտական կամ այլ վարձատրվող գործունեության (այսուհետ՝ «արտաքին գործունեություն») իրականացման համար: Պայմանագիրը նախատեսում է նման հնարավորություն, սակայն դրանով սահմանված շրջանակներում: Դրանց սահմանման չափանիշը՝ միջազգային ծառայողի կողմից իր վրա դրված պաշտոնեական պարտականություններն ի շահ Միության անկախ եւ

արդյունավետ կատարելու հնարավորությունն ապահովելն է:

Պայմանագրի՝ Միության միջազգային ծառայողների կարգավիճակը կարգավորող դրույթների նման մեկնաբանությունը համապատասխանում է այլ միջազգային կազմակերպությունների պրակտիկայում լայն ճանաչում ստացած, այդ թվում՝ Միջազգային քաղաքացիական ծառայության հարցերով խորհրդատվական խորհրդի կողմից նախապատրաստված եւ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 67/257 բանաձեւով առանց քվեարկության հավանության արժանացած՝ «Միջազգային քաղաքացիական ծառայության վարքագծի ստանդարտների» 45-րդ, 46-րդ եւ 47-րդ կետերում ամրագրված մոտեցմանը:

11. Դատարանի մեծ կոլեգիան համարում է, որ Դիմողի հարցերին պատասխաններ տրամադրելու նպատակով՝ անհրաժեշտ է պարզաբանել ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 35-րդ կետում եւ 56-րդ կետի չորրորդ պարբերության մեջ գործածվող «այլ աշխատանք» եւ «այլ վարձատրվող գործունեություն» հասկացությունների բովանդակությունը:

Դատարանի մեծ կոլեգիան, ընդ որում՝ արձանագրում է, որ պաշտոնատար անձանց նկատմամբ Պայմանագրով սահմանված՝ Հանձնաժողովում աշխատանքն այլ աշխատանքի հետ համատեղելու արգելքին վերաբերող մասով, «այլ աշխատանք» հասկացության նշանակությունը Պայմանագրում եւ Միության այլ ակտերում բացահայտված չէ: Միեւնույն ժամանակ, «աշխատանք» եզրույթը բազմիցս օգտագործվում է ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 35-րդ կետում եւ 56-րդ կետի չորրորդ պարբերության մեջ տարբեր ձեւակերպումներով՝ «աշխատանքի ժամանակահատվածում», «աշխատանք Հանձնաժողովում», «այլ աշխատանք»:

Բացի այդ՝ ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 54-րդ կետում նախատեսվում է, որ «Հանձնաժողովի պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների աշխատանքի ընդունումն իրականացվում է Պայմանագրի 9-րդ հոդվածին համապատասխան»: Այդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Միության մշտապես գործող մարմինների կառուցվածքային ստորաբաժանումներում պաշտոններ զբաղեցնելու իրավունք ունեն անդամ պետությունների այն քաղաքացիները, որոնք ունեն համապատասխան մասնագիտական կրթություն եւ աշխատանքային փորձ: Ընդ որում, ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 54-րդ կետի հինգերորդ պարբերության համաձայն՝ Հանձնաժողովի դեպարտամենտների տնօրենների եւ նրանց

տեղակալների հետ աշխատանքային պայմանագրեր (կոնտրակտներ) կնքվում են այն ժամկետով, որը չի գերազանցում այդ Հիմնադրույթի 33-րդ կետին համապատասխան ձեւավորված՝ Հանձնաժողովի կոլեգիայի աշխատանքի ժամկետը:

Դատարանի մեծ կոլեգիան, հաշվի առնելով վերոշարադրյալը, համարում է, որ միջազգային պայմանագրերի մեկնաբանման՝ սույն Խորհրդատվական եզրակացության չորրորդ կետում բերված ընդհանուր կանոնին համապատասխան՝ Պայմանագրի դրույթները պետք է մեկնաբանվեն այն սովորական նշանակությանը համապատասխան, որը պետք է տրվի «[ԵՏՀ պաշտոնատար անձի] աշխատանք» եւ «այլ աշխատանք» եզրույթներին՝ դրանց համատեքստում, որը ներառում է պայմանագրի տեքստը, դրա նախաբանը եւ հավելվածները, ինչպես նաեւ հաշվի առնելով Պայմանագրի օբյեկտն ու նպատակները:

ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 35-րդ կետում եւ 56-րդ կետի չորրորդ պարբերության մեջ օգտագործվող նորմատիվ կառուցվածքը («Հանձնաժողովում աշխատանքը համատեղելու այլ աշխատանքի հետ»), ինչպես նաեւ այն համատեքստը, որում նշված կառուցվածքային տարրերում կիրառվում է «աշխատանք» եզրույթը, հիմք է տալիս ենթադրելու, որ «այլ աշխատանք» ձեւակերպումը նշանակում է Հանձնաժողովի պաշտոնատար անձի աշխատանքային գործունեությունը՝ Հանձնաժողովից բացի, ցանկացած այլ գործատուի մոտ:

Քանի որ, Պայմանագրի 6-րդ հոդվածի համաձայն, Միության իրավունքը կազմում է միասնական համակարգ, ընդհանուր կանոնի համաձայն՝ Միության իրավունքի ակտերում օգտագործվող հասկացություններն ու եզրույթները պետք է կիրառվեն միասնական նշանակությամբ (P-3/24 գործով 2024 թվականի նոյեմբերի 13-ի Խորհրդատվական եզրակացության 9-րդ կետ): ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 35-րդ եւ 56-րդ կետերում մեկ նախադասության շրջանակներում «աշխատանք», «աշխատանք Հանձնաժողովում», «այլ աշխատանք» հասկացությունների օգտագործումը հանգեցնում է դրանց բովանդակային բնութագրերի նմանության մասին եզրակացության:

Բացի այդ՝ Դատարանի մեծ կոլեգիան նախկինում պարզաբանում է տվել «աշխատանքի ժամանակահատված» եզրույթին՝ Արտոնությունների եւ

անձեռնմխելիությունների մասին հիմնադրույթի 53-րդ եւ 54-րդ կետերի նպատակներով (P-2/24 գործով 2024 թվականի մարտի 28-ի Խորհրդատվական եզրակացության 19-րդ կետ), որից նույնպես երեւում է, որ Հանձնաժողովում աշխատանքը դա Հանձնաժողովի պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների աշխատանքային գործունեությունն է՝ նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերի (կոնտրակտների) հիման վրա:

Վերոշարադրյալը հաշվի է առնում նաեւ Պայմանագրի 2-րդ հոդվածի չորրորդ եւ տասնչորսերորդ պարբերությունների, ինչպես նաեւ ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 39-րդ, 54-րդ կետերի, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովում պաշտոններ զբաղեցնելու հետ կապված հարցեր» թիվ 99 որոշման դրույթները, որոնց համաձայն՝ Հանձնաժողովի պաշտոնատար անձանց աշխատանքն իրականացվում է աշխատանքային պայմանագրերի (կոնտրակտների) հիման վրա: Սա համահունչ է նաեւ այն իրավական դիրքորոշումներին, որոնք նախկինում ձեւակերպվել են Դատարանի կողմից՝ Միության իրավունքը կազմող եւ աշխատանքային հարաբերությունները կարգավորող պայմանագրերի եւ ակտերի դրույթները պարզաբանելիս (օրինակ՝ P-5/17 գործով 2017 թվականի դեկտեմբերի 11-ի Խորհրդատվական եզրակացության 11-րդ կետի դրույթներին առ այն, որ աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունների կատարումը ենթադրում է նրա եւ գործատուի միջեւ աշխատանքային հարաբերությունների առկայություն, ինչպես նաեւ աշխատողի կողմից իր աշխատանքային գործառույթը վճարովի հիմունքներով անձամբ կատարման մասին համաձայնության առկայություն):

12. Ըստ Դատարանի մեծ կոլեգիայի՝ գործունեության հիմքը թույլ է տալիս ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 35-րդ եւ 56-րդ կետերի իրավական կարգավորման նպատակներով՝ «այլ վարձատրվող գործունեություն» եւ «աշխատանքը» տարանջատել: Ընդ որում, «վարձատրվող գործունեություն» հասկացությունը կարող է ընդգրկել գործունեության այնպիսի տեսակներ, որոնք դուրս են աշխատանքային իրավունքի նորմերով կարգավորվող շրջանակներից, եւ, համապատասխանաբար, ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 35-րդ եւ 56-րդ կետերի նպատակներով, «աշխատանքից» առավել ընդհանուր կատեգորիա է:

ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 35-րդ կետում եւ 56-րդ կետի չորրորդ պարբերության մեջ օգտագործվող՝ «Հանձնաժողովում աշխատանքը

համատեղելու այլ աշխատանքի հետ կամ զբաղվելու մեկ այլ վարձատրվող գործունեությամբ» արգելքի մասին ձեւակերպումը մատնանշում է ընդհանուր չափանիշ, որը բնորոշ է ինչպես «այլ աշխատանքի», այնպես էլ «այլ գործունեության»՝ Հանձնաժողովի պաշտոնատար անձի համար արգելված եւ՝ մեկ, եւ՝ մյուս գործունեությունը բնութագրվում է վարձատրության առկայությամբ:

Ինչ վերաբերում է Հանձնաժողովի պաշտոնատար անձի կողմից այնպիսի գործունեության իրականացմանը, որի համար նրան վարձատրություն չի հասնում (այսինքն՝ անհատույց հիմունքներով), ապա Պայմանագրի նշված դրույթները դրա վերաբերյալ սահմանափակումներ չեն պարունակում:

13. Դատարանի մեծ կոլեգիան արձանագրում է, որ «աշխատանք Հանձնաժողովում» ասելով, ընդհանուր կանոնի համաձայն, պետք է հասկանալ Հանձնաժողովի պաշտոնատար անձի կողմից աշխատանքային պայմանագրին (կոնտրակտին) համապատասխան՝ վարձատրվող մասնագիտական աշխատանքային գործունեության իրականացումը՝ Միության միջազգային ծառայողի պարտականությունները սահմանված ժամկետի ընթացքում, մշտական հիմունքներով եւ լրիվ զբաղվածության պայմաններով կատարելու համար:

Հանձնաժողովի պաշտոնատար անձի աշխատանքի հետ անհամատեղելի կհամարվի «այլ աշխատանք», որը ենթադրում է, որպես կանոն, աշխատանքային գործունեության իրականացում՝ համադրելի պայմաններով, այդ թվում՝ վարձատրության դիմաց, Հանձնաժողովից բացի ցանկացած այլ գործատուի հետ համաձայնությամբ:

Դատարանի մեծ կոլեգիան իր իրավասության շրջանակներում համարում է, որ չկան բավարար, Պայմանագրի տեքստի վրա հիմնված հիմքեր՝ որպես «այլ աշխատանք», որի նկատմամբ գործում է Պայմանագրով սահմանված համատեղման արգելքը, դիտարկելու Հանձնաժողովի պաշտոնատար անձի գտնվելը Դատավորների ռեեստրում եւ նրա գործունեությունը՝ որպես ԱՊՀ դատարանի դատավոր:

Ընդ որում, Պայմանագրի այն դրույթը, որն արգելում է ԵՏՀ պաշտոնատար անձին համատեղել աշխատանքը Հանձնաժողովում այլ աշխատանքի հետ, համապատասխանում է նրա՝ որպես միջազգային ծառայողի, պարտականությանը՝ գործադրել բոլոր ջանքերը՝ կատարելու իր ծառայողական պարտականությունները բարձր մասնագիտական մակարդակով եւ առավելագույն

արդյունավետությամբ:

Դատարանի մեծ կոլեգիան այս կապակցությամբ տեղին է համարում հղում կատարել Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) վարչական տրիբունալի 1550 որոշման մեջ արտացոլված իրավական դիրքորոշմանը, որում նա նշել է, որ «միջազգային քաղաքացիական ծառայողի գլխավոր պարտականությունն այն է, որպեսզի իր ամբողջ եռանդն ու կարողությունները լիովին նվիրի այն կազմակերպությունում աշխատանքին, որտեղ նա ծառայում է: Ռեսուրսների, ժամանակի եւ եռանդի չափազանց մեծ արտահոսք առաջացնող գործունեությանը մասնակցելը թույլատրելի չէ»:

Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ ԵՏՀ կոլեգիայի նախագահի (որը դիմողի հետ աշխատանքային հարաբերություններում հանդես է գալիս որպես գործատուի ներկայացուցիչ)՝ Դատարանի հարցմանն ի պատասխան նամակում շարադրված դիրքորոշումը նույնպես համահունչ է վերոշարադրյալ մոտեցմանը:

14. Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ Հանձնաժողովի պաշտոնատար անձի մանկավարժական, գիտական կամ այլ ստեղծագործական գործունեությունը (անկախ նրանից՝ այն վարձատրվող է, թե ոչ)՝ ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 35-րդ կետով եւ 56-րդ կետի չորրորդ պարբերությամբ, չի արգելվում:

ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 35-րդ, 38-րդ եւ 56-րդ կետերով սահմանված արգելքից նշված բացառությունը, սակայն, իրավական նշանակություն չունի Հանձնաժողովում պաշտոնատար անձի աշխատանքի՝ ԱՊՀ դատարանի դատավորի կարգավիճակով գործունեության հետ համատեղելիության գնահատման համատեքստում: Չնայած նրան, որ Միության իրավունքի ակտերը չեն պարունակում «մանկավարժական, գիտական կամ այլ ստեղծագործական գործունեություն» հասկացության սահմանումը, ըստ Դատարանի մեծ կոլեգիայի՝ միջազգային արդարադատության իրականացումը մասնագիտական գործունեության հատուկ տեսակ է, որը դրա նպատակների, բնույթի եւ բովանդակության, արդարադատություն իրականացնող անձանց նկատմամբ որակավորման պահանջների եւ նրանց իրավական կարգավիճակի տեսանկյունից չի կարող դասվել գիտական, մանկավարժական կամ այլ ստեղծագործական գործունեության կատեգորիային՝ դրանց սովորաբար կիրառվող նշանակությամբ:

15. Դատարանի մեծ կոլեգիան արձանագրում է, որ Դիմողի հարցերի պատասխանը ենթադրում է ԵՏՀ պաշտոնատար անձանց՝ որպես Միության

միջազգային ծառայողների նկատմամբ սահմանված պահանջների, արգելքների եւ սահմանափակումների համադրում՝ ԱՊՀ դատարանի իրավական կարգավիճակը, գործունեության կարգն ու պայմանները սահմանող միջազգային համաձայնագրերի դրույթների հետ, որը «Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական դատարանի կարգավիճակի մասին» 1992 թվականի հուլիսի 6-ի Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» 2017 թվականի սեպտեմբերի 13-ի Արձանագրությունն (այսուհետ համապատասխանաբար՝ Համաձայնագիր, Արձանագրություն) ուժի մեջ մտնելուց հետո միջազգային արդարադատության մշտապես գործող մարմնից իր մասնակից պետությունների կողմից վերակազմավորվել է՝ *ad hoc* ձեւաչափով կոնկրետ գործեր քննելու գործունեություն իրականացնող միջազգային դատարանի (Համաձայնագրի 3.2-րդ հոդված):

16. Այս կապակցությամբ Ղատարանի մեծ կոլեգիան նշում է, որ ԱՊՀ դատարանի կարգավիճակը, լիազորությունները եւ գործունեության կարգը սահմանված են Անկախ Պետությունների Համագործակցության կանոնադրության 32-րդ հոդվածով, որն ընդունվել է ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի 1993 թվականի հունվարի 22-ի որոշմամբ, Համաձայնագրով հաստատված եւ դրա անբաժանելի մասը կազմող՝ Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական դատարանի մասին հիմնադրույթով (այսուհետ՝ ԱՊՀ դատարանի մասին հիմնադրույթ), ինչպես նաեւ Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական դատարանի կանոնակարգով, որը հաստատվել է դրա Պլենումի 2023 թվականի հունիսի 15-ի թիվ 2 որոշմամբ (այսուհետ՝ ԱՊՀ դատարանի կանոնակարգ):

ԱՊՀ դատարանի մասին հիմնադրույթի գործող խմբագրության 7-րդ կետի համաձայն՝ Ղատավորների ռեեստրը ձեւավորվում է միջազգային իրավունքի բնագավառում բարձր որակավորում ունեցող մասնագետ հանդիսացող, իրավունքի բնագավառում բարձրագույն դատական պաշտոններում կամ պետական ծառայության ղեկավար պաշտոններում նշանակվելու համար, որպես կանոն, ներկայացվող պահանջներին համապատասխանող անձանց թվից: ԱՊՀ դատարանի ղատավորներն ընտրվում (նշանակվում) են Ղատավորների ռեեստրում տասը տարի ժամկետով՝ մասնակից պետություններում նախատեսված կարգով: Ղատավորների ռեեստրում ընդգրկումը տեղի է ունենում ղատավորների ընտրվելու (նշանակվելու) մասին ծանուցման հիման վրա, որը մասնակից պետության կողմից ուղարկվում է ԱՊՀ դատարան:

17. Այս կամ այն անձի՝ Դատավորների ռեեստրում նշանակումը (ընտրությունը) ինքնին չի առաջացնում հիմնական աշխատանքի վայրում նրա աշխատանքային հարաբերությունների դադարեցման պարտականություն. չի պահանջում տեղափոխություն եւ(կամ) մշտական ներկայությունը ԱԴՅ դատարանի գտնվելու վայրում. նրա անվերապահ մասնակցությունը կոնկրետ դատական գործերի քննությանը կամ նման քննության համար դատական պալատում նշանակմանը. նրա մասնակցությունը ԱԴՅ դատարանի ղեկավար մարմնի՝ Պլենումի նիստերին:

18. ԱԴՅ դատարանի մասին հիմնադրույթի 13-րդ կետի համաձայն՝ Դատավորների ռեեստրում ընդգրկված դատավորին յուրաքանչյուր կոնկրետ գործի քննության համար վճարվում է վարձատրություն, եթե նա այն անձը չէ, որին նման վարձատրություն չի կարող վճարվել՝ նրա հիմնական աշխատանքի (ծառայության) հետ կապված:

Քանի որ Պայմանագիրն ուղղակիորեն արգելում է Միության պաշտոնատար անձի կողմից այլ վարձատրվող գործունեության իրականացումը, բացառությամբ մանկավարժական, գիտական կամ այլ ստեղծագործական գործունեության, Դատավորների ռեեստրում ընդգրկված պաշտոնատար անձը ԱԴՅ դատարանի դատավորի գործունեությունը կիրականացնի միայն անհատույց հիմունքներով:

19. Դատարանի մեծ կոլեգիան, հաշվի առնելով վերոշարադրյալը, հանգում է հետևյալ եզրակացության:

ԱԴՅ դատարանը, իր հիմնադիր ակտերին համապատասխան, միջազգային արդարադատության մարմին է, որն ստեղծվել է մասնակից պետությունների կողմից՝ տնտեսական բնույթի միջպետական վեճերը լուծելու, Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում ընդունված տնտեսական հարցերով միջազգային պայմանագրերի եւ Համագործակցության այլ ակտերի միատեսակ մեկնաբանումն ու կիրառումն ապահովելու համար, եւ որը գործում է *ad hoc* ձեւաչափով:

Այս կամ այն անձի գտնվելը Դատավորների ռեեստրում եւ նրա մասնակցությունն անհատույց հիմունքներով ԱԴՅ դատարանի գործունեությանը՝ որպես դրա դատավոր, բացառությամբ ԱԴՅ դատարանի նախագահ ընտրվելու դեպքի, «այլ աշխատանք» չէ՝ ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 35-րդ, 38-րդ եւ 56-րդ կետերի իմաստով:

Քանի որ Դատավորների ռեեստրում նշանակված (ընտրված) անձինք, որպես ԱԴՅ դատարանի դատավոր գործունեություն իրականացնելու դեպքում, գործում են Համաձայնագրի մասնակից պետությունների ընդհանուր շահերից ելնելով, նրանց գործունեությունը չի կարող համարվել «սեփական կամ այլ անձանց շահ հետապնդող գործունեություն» (Արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին հիմնադրույթի 23-րդ կետ):

Չվարձատրվող գործունեությունը (այսինքն՝ անհատույց հիմունքներով)՝ որպես *ad hoc* ԱԴՅ դատարանի դատավոր, չի արգելվում ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 35-րդ կետով եւ 56-րդ կետի չորրորդ պարբերությամբ: Ընդ որում, նման գործունեությունը չի դասվում մանկավարժական, գիտական կամ այլ ստեղծագործական գործունեության շարքին:

20. Մնացյալ մասով կոնկրետ հանգամանքների գնահատումը, որոնք առնչվում են Դիմողի կողմից Հանձնաժողովի իրավական դեպարտամենտի տնօրենի պաշտոնում աշխատանքը ԱԴՅ դատարանի գործունեությանը մասնակցելու հետ համատեղելու հնարավորության սահմանմանը, կամ դրան վերաբերող փաստական հանգամանքների գնահատումը, դուրս է Դատարանի լիազորություններից:

Դատարանի մեծ կոլեգիան նաեւ հնարավոր չի համարում Պայմանագրի տեսանկյունից *in abstracto* թույլատրելիության գնահատական տալ Հանձնաժողովի պաշտոնատար անձի աշխատանքի՝ նրա կողմից *ad hoc* այլ միջազգային դատարանի դատավորի գործառույթների կատարման հետ համատեղման առնչությամբ:

21. Դատարանի մեծ կոլեգիան վերոշարադրյալի հիման վրա ներկայացնում է հետեւյալ պարզաբանումը.

21.1. ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 35-րդ կետի եւ 56-րդ կետի չորրորդ պարբերության նորմերը ուղղակի արգելք չեն պարունակում Հանձնաժողովի պաշտոնատար անձի՝ ԱԴՅ դատարանի դատավորների ռեեստրում նշանակման (ընտրության) եւ նրա կողմից *ad hoc* ձեւաչափով որպես այդ դատարանի դատավոր չվարձատրվող գործունեության իրականացման համար, եթե նման գործունեությունը չի հանգեցնի շահերի բախման: Ընդ որում, Միության միջազգային ծառայողի կարգավիճակով նախատեսվում է միջոցներ ձեռնարկելու նրա պարտականությունը՝ շահերի բախումը կանխարգելելու կամ կարգավորելու

համար: ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 35-րդ եւ 56-րդ կետերի իմաստով՝ նշված գործունեությունը Հանձնաժողովի պաշտոնատար անձի համար «այլ աշխատանք» կամ «այլ վարձատրվող գործունեություն» չէ:

21.2. ԱՊՀ դատարանի դատավորի կամ *ad hoc* այլ միջազգային դատարանի դատավորի կարգավիճակով գործունեությունը չի դասվում ԵՏՀ-ի մասին հիմնադրույթի 35-րդ եւ 56-րդ կետերում նշված մանկավարժական, գիտական կամ այլ ստեղծագործական գործունեության շարքին:

III. Եզրափակիչ դրույթներ

Սույն Խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել Դիմողին:

Խորհրդատվական եզրակացությունը տեղադրել Դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախագահող՝

Ա.Ա. Դրոնով

Դատավորներ՝

Ա.Ս. Աժիբրաիմովա

Է.Վ. Ջայրիյան

Դ.Պ. Ալեքսանդրով

Ա.Ա. Չաբարա

Ե.Ժ. Իսմայիլով

Մ.Տ. Կայիպով

Ա.Բ. Կիշկեմբաեւ

Ն.Վ. Պավլովա

Ա.Գ. Թունյան